**Մրցույթ՝ «Երևանի թիվ 152 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (6 դասաժամ), աշխարհագրության (9,5 դասաժամ), դասվարի (18 դասաժամ), երաժշտության (8,5 դասաժամ), կենսաբանության (8 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ, աղջիկների խումբ), ֆրանսերենի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

- ✓ Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3 × 4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
-ինքնակենսագրություն (Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2022թ. օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր ժամը $10^{00}$-ից մինչև $15^{00}$-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022թ. սեպտեմբերի 16-ին՝ ժամը 14:30-ին**, Երևանի թիվ 152 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Արարատյան 1-ին զանգված:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 010 77-01-20 հեռախոսահամարով: